ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 12. ԱՊՐԻԼ. Nr 12. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԱՂԲԸ

Եթէ եւրոպական մեծ կոչված անտէրութիւնները լինէին քիչ նուազ կեղտոտ և քիչ աւելի նման կառավարութիւնների քան մարդասպան դաւադիր խմբերի, սուլթան կոչված մարդակուլ հրէշն, անտարակոյս, թոկից կախված հիմա կը ճօճվէր, հոգին աւանդած իր հարէմի հուրիների փեշքերի տակ:

Զարհուրելի կոտորածները Հայաստանում, սպանութիւնները Կրէտէում, վերջապէս փոքրիկ յոյն ժողովրդի քաջարի զօրքերին հասցրած ջարդերը կազմում են արդէն մարդախողխողման մէկ այնպիսի ծաները ոճիր, որ մի մարդ, լինի արիւնկզակ սուլթան անգամ, անկարող է կրել իր ուսերի վրայ մարդկութեան դիմաց, պատմութեան դիմաց:

Հէնց այդ պատճառով է, արդարև, որ եւրոպական հինգ թագակիրները և նրանց կապիկ Ֆէլիքս Ֆոլը, Ֆրանսիական Հանրապետութիւն կոչված տէրութեան պանամիստների նախագահը, շտապում են օգնութեան հասնել իրանց եղբայր Համո մարդասպանին և սրա բեռն իրանք էլ կրելով, քիչ թեթեւացնել նրա նմանը չեղած արիւնալի պատասխանատուութիւնը:

Եւ նրանք այդպիսով իրանց իսկական դերի ու բնական կոչման մէջ չե՞ն միթէ: Կառավարել ժողովրդներին — այդ պետութիւններին վայելում է նոյնչափ, որչափ ձիու թամբը վայելչակազմ երկայնականջին:

Անշուշտ, այդ քրիստոնեայ կոչված անտէրութիւնների Աստուածը, նրանց Պապի Աստուածը — քրիստոնեայ բարի Աստուածը — տկար է միսիւլմանների արիւնուշտ Ալլահից, որը, երևի, արդարութեան նրժարը ձեռքին, ապացուցանում է իր եղբայրակից քրիստոնեայ Աստուածին, որ սրա վեց անտէրութիւնների մեղքերն ու յանցանքները դարձեալ շատ աւելի են ու ծանրը, քան իր սիրած Համոյի ոճիրները, որոնք մեծ Մարգարէի փսխած կտակներն են:

Ամեն մարդ հիմա գիտէ, թէ որքան ճշմարիտ է Ալլահի այդ դիւական ծաղրն ու լռութիւնը:

Եւ ինչպէս խոնարհ ծառաներ, կամ, եթէ կուզէք, շահախնդիր սարուկներ, վեց պետութիւնները լուանում են Համոյի աղտոտ ու արիւնաշաղախ ոտքերը հարիւր հազարաւոր, միլիոնաւոր թշուառների արտասուքներում, և ապա սրբում նրանց, Իսլամի Խալիֆայի ոտքերը, երանց դիւանագիտական Կոտանների նողկալի փալասներով:

Այդ Համիդը, որի մարմինը, հակառակ ամեն գործածված անուշահոտութիւնների, նոյնչափ նեխված ու հոտած է հարէմական աղտից, որչափ և նրա միտքն ու հոգին՝ այլանդակ, անանուն ոճիրներից, այդ հրէշն, ասում ենք, նրանք, այն անտէրութիւններն, իրանց աջակցութեամբ դարձրին Ռիւաղ մարդկութեան դլխին և Իսլամականութեան աչքին բարձրացրին նրան մինչև Մարգարէի բարբարոսական „սրբութեան“ աստիճանը:

Եւ ինչո՞ւ չէ: Ազ՞ արդեօք այդ Ռիւաղը թէ նրանց տէրը, թագաւորը թագաւորների, և թէ միանգամայն անփոխարինելի գործիք նրանց ձեռքին՝ ոչնչացնելու համար այն բոլոր փոքրիկ ժողովրդներին, որոնք պատմութեան բերումով այսօր կրում են իրանց ձեռքին Ազատութեան ու Արդարութեան դրօշը և դրանով արդելք լինում վեց Մեծերի թագակիրների ու նրանց կապիտալիստների դրամական խաբեբայութիւնների և այլ անխոստովանելի շահերի խարդախութիւնների գործադրութեան ու խաղերին, որպէս նաև բռնութեան:

Եւ դրա հետ միասին, չեն էլ փորձում հերքել, թէ իբր գերմանական թըմբկահար կայսրը, որպէս և Ֆրանսիական կապիտալիստների գործակալ՝ արտաքին գործերի մինիստր Համոտ — գուցէ և ուրիշ այդպիսիներ — կաշառված են սուլթանի կողմից, մէկը վեց միլիոն, միւսը՝ հինգ հարիւր հազար Ֆրանկով: Նոյնպէս անամօթութեան չափից արդէն անցել է եւրոպական մամուլի ամենամեծ մասը, որ երբէք չէ արհամարհում սուլթանական ամենաչնչին բաքշիշներն անգամ՝ ծախելու համար իր պատիւն, իր ազգի, իր սուրբ կոչման պատիւը, որպէս նաև աջակցելու սուլթանին աշխարհիս ամենապարհուրելի ոճրագործութիւններում:

Եւ այդ անտէրութիւնների ժողովրդները սրտի մորմոքումով ու խորին զայրոյթով են տեսնում, թէ ո՞ր աստիճան ցածութեան են հասել իրանց այդ վեց մեծերը:

Եւ ինչպէս չը մաղթել, որ օր առաջ հասնէ այն ժամը, երբ կատաղած ժողովրդները — զայրացած, որ մի խումբ մարդիկ, թագակիր ու կառավարիչ, իրանց քմահաճոյքին ու շահին խաղալիք են դարձրել ամբողջ մարդկութեանն ու Արդարութեան դատը, — զինված յեղափոխութեան ցախ աւելով վերջապէս, կը մաքրեն աշխարհից այդ ամբողջ գարշահոտ աղբը:

ԱՇԸՂԻ ԵՐԳԸ

Հազար եւ ութը հարիւր քառասուն եւ երեքին
Վրայ հասաւ անպատմելի պատուհաս մը աշխարհքին:
Ոչ ոք չը գիտէր թէ ծընաւ նա մօր մ'արգանդէն,
Թէ Մուհամմէտ Ալիի աշխարհաւեր աւանդէն
Նա ծագուկ մ'էր կախարդէն, ճիւաղներու դըժոխքէն:
Բայց աշըղը հասկըցաւ, որ դեւերու սեւ մեղքէն
Ելած պըտուղ մ'եղաւ նա, անուն Համո-Համինի,
Որ սաղաշխարհը գիտի:

*

Հազար եւ ութը հարիւր քառասուն եւ երեքին
Մութ ամպերը պատեցին չորս կողմերը աշխարհքին:
Ծընաւ ծագուկ մը՝ Համո, ճակտին կարմիր հետք արեան,
Օձերն իրենց բոյն դըրած անոր նեխած խոր բերան,
Աչքը՝ մաղձոտ, սիրտը՝ չար, սուլթան ըլլալ կը տենչար,
Երբ Ազիզին իսկ վրդով անցուցին չուան ու խենչար
Եւ միւսիւլման աշխարհը ցնծաց թէ նոր փրկիչ կայ, —
Սաղ մարդկութիւն է վրկայ:

*

Ելաւ Համո նստեց թախտ արիւնախում բռնութեան,
Երկնից աստեղք անհամար, պայծառ զարդեր բընութեան,
Դարձուց մի-մի հուր կըրակ, թափեց վրան հայութեան,
Որ ինք ըլլայ մեծ արծան Իսլամի անմահութեան:
Վեց մեծանուն եղբարքն ալ, վեցն ալ իրար թշնամի,
Տեին խըրախոյս գազանին, եղան վատին խընամի,
Եւ Հայ ու Յոյն, Կրէտացի ելան կրուի փրկութեան
Ցանուն տանջված մարդկութեան:

*

Այդ մեծութեան օրերը կուի դաշտի նուրբ ծաղկունք
Գլուխ կախեցին սեւ սուգէն, եւ սիրասուն աղջըկունք
Խրախուսելով քաջերուն՝ լացին իրենց փեսաներ,
Լացին կանայք դաշտն անթաղ մնացած իրենց էրիկները,
Մայրեր որդիքն ողբացին, երեխան հօրը կանչեց...
Ա՜խ, աշըղը հասրանայ, որ իր հոգին խիստ տանջեց,
Սազի թելերն կտրուին, լացէն կորսւի լոյսն աչքի,
Որ այդ մեծ սուգը չերգի...

*

Հէրքէթ կը գայ լոյս օրը... Կանաչ-կարմիրը սիրուն
Ազատ ազգաց երկինքն է պատեր, կապեր զարդարուն,
Պարեն, երգեն կոյսերը, նշանածներ-աղաւնիք
Իրար պագեն՝ սրմնջան, մայրերն օրհնեն քաջ որդիք
Էրիկն պարծանք այրիին... Ա՜խ, լոյս խաղայ աչերուդ,
Աշըղ, վրկայ պատմութեան. երգէ մահը քաջերուդ,
Սազիդ թելեր թոթրան... Դորա՞ն, անցան ալ վատեր.
Կանաչ-կարմիրն է պատեր:

ԽԵՆԹՐ.

ՎԵՑ ՍԵՈՅԻ ԴԻՐՔԸ.



Ազատութեան եւ փոքր ազգի ոչնչացման զէնքը:



„ԱՐԹՈՒՆ ԵՐԱԶ“

„Փարիզ էինք. օրը ծիծաղկոտ և պայծառ էր. ես բազմած էի անգլիական վերին աստիճանի շքեղ մի Փայթօնի մէջ. իմ դիմացս նստած էր ինձ հետ „Հայք“ի խմբագիր Տօքթէօր Կէպրիէլ. ա՛խ, ինչքան ծիծաղելի էր անոր դէմքը. քանի յիշեմ խնդալէն կը մարիմ. աչքերը Մադագասկարի աղուէսի աչքերուն կատարեալ նմանութիւնն ունէր, վիզը՝ երկայն ու բարակ, իսկ ատոր վրայ աւելցուր բուսական մեծկակ գլուխ մ՚ալ, որ ճիշտ ջրդդում ըլլար կարծես, իր զզուելի ու տգեղ ժպիտով, ծալապատիկ բազմած Թուրք փաշայի մը պէս, իր աջ ու ձախ ձեռքերով անցորդներուն կը բարևէր: Բայց տեսնելով որ անցորդները կը ծաղրեն զինքը, զարմացմամբ մեր Տօքթէօրը իր աղուէսական սուր աչքերը իմ վրաս դարձնելով, ըսաւ. „զի՞նչ խայտառակութիւն իցէ զայս, Միւսիւ Չերազ, զի՞նչ անկիրթք իցեն Գաղիացիք, մի՞թէ ոչ լուեալ իցէ դոցա, զի ես առաքեալ եմ, ի պատգամաւորութիւն ի հայոցս Ամերիկայ բնակելոյս. նմանապէս և դուք նախկին պատգամաւոր Պէրլինի Վեհաժողովին, և այժմս ևս պատգամաւոր Անգղիայի հայոց կողմէ Փարիզի Գօնկրէսին:“ Մեր հռետորը իր ձեռքերու ելևէջը կը շարունակէր դեռ, երբ յանկարծ վեց պետութիւններու ներկայացուցիչները իրենց դեղեցիկ նժոյգներուն վրայ նստած մեզ դիմաւորեցին, ամենայարգալից և շնորհալի կերպով մեզ ողջունելէ վերջ, առաջնորդեցին մեզ մի շատ սիրուն զարդարուած պուլըվարի միջով դէպի այն պալատը, ուր հաւաքուած էր Գօնկրէսը Արևելեան խնդիրը լուծելու համար. դահլիճէն ներս մտանք թէ չէ, բոլոր ժողովականները ոտքի կանգնելով ծափահարեցին մեզ՝ հայ պատգամաւորներուս, և ցոյց տուին ինձ նստել յատկապէս պատրաստուած շքեղազարդ մէկ թիկնաթոռի վրայ նոյնպէս Տօքթէօրին իմ քովս... Ա՜խ ես այնքան ուրախ էի և հպարտ կզգայի ինքզինքս այսպիսի փառքի և պատուի բաղդաւորութեանս համար, որ մինչև անգամ չէի լսեր թէ ժողովականները ի՜նչ խնդրոյ մասին կը վիճէին, միայն ատեն ատեն կը լսէի Տօքթ. Կէպրիէլի ձայնը, որ իր նստարանի վրայ բարձրացած կըսպառնար ժողովին շուտով կարգադրել հայկական խնդիրը, թէ չէ ինքը „Տիեզերական Ապստամբութիւն“ կը հրչակէ և ամբողջ աշխարհ տակն ու վրայ կընէ:

„Այսպիսի երջանիկ դրութեան մէջ էի, յանկարծ հայ հարուստ մը մշտեց կողքիս և ձեռքի պնակը ինծի երկնցուց որ պտտցունեմ ժողովրդի մէջ. կայծակնահար վեր թռայ տեղէս, աչքս շուրջս դարձուցի և տեսայ որ Լօնդօնի հայոց եկեղեցիին մէջն եմ, Տէրտէրը պատարագ կը մատուցանէր: Պնակը ժողովրդի մէջ պտտցունելէս վերջ, ջերմեռանդ աղօթեցի Աստուծոյ որ երազս իրականացնէ, և դուրս ելայ“:

Վերև նկարագրածս պատմելով ինձ Մ. Չերազ, „ա՜խ, ասում էր, խորին հառաչով, ինչքան պիտի տխրիմ, եթէ երազս չիրագործուի, բայց հայերը ապերախտ են արդէն, մէկ նախկին պատուիրակ բառը շատ տեսան ինծի պէս դիւանագէտ և իմաստուն հանճարին, և այդ անիծուած „Ապտակ“ի մէջ խայտառակեցին զիս, որով ստիպեալ զրկուեցայ այդ սիրած տիտղոսէս“. յետոյ աւելի ոգևորուելով, „ես գիտեմ“, ասում է Մ. Չերազ, „եթէ „Հնչակ“ը և „Ապտակ“ը չըլլային, հայերը զիս, թագաւորի պէս պիտի յարգէին և ես հիմա եղի և մեղրի մէջ կը լողայի, այդ երկու թերթերը իմ ոտքս ու ձեռքս կապած են պզտիկ շարժում մը կընեմ թէ չէ, անմիջապէս խաղք խայտառակ կը շինեն զիս, թէպէտ ես աջ ու ձախ թէ նամակներով և թէ իմ թերթիս մէջ շատ կաշխատիմ այդ թերթերի խմբագիրն անուանարկելու, բայց օգուտ չըներ, դարձեալ անոր յարգողները և հետևորդները թէ հայ և թէ օտարազգի բազմաթիւ են, իսկ մենք ճանճ կը կլլենք: Ա՜խ այդ Նազարբէկը. անիկայ է միշտ դիմակս վար առնողը...

Դեռ երկար կը շարունակէր խօսիլ Մ. Չերազ եթէ չ'ընդհատէի նրան և ներողութիւն չը խնդրէի որ մեկնելու էի. — Նա սիլինտրը վար առաւ, քիթը մինչև ծնկերը դպչելու չափ խոնարհութիւն մ'անելուց յետոյ, քայլերը ուղղեց. դէպի զբօսարան...

ԾԻԾԱՂ.

ԵՐԵՔ ՕԴԱՊԱՐԻԿՆԵՐ

Այնտեղ՝ Յունա-Թրքական սահմանագլխի վրայ, օդում անշարժ կեցած են երեք օրօրոցաձև օդապարիկներ, որոնք զարդարուած են ընտիր մահուդներով, կերպասներով և ոսկեղէններով: Վաղուց չէ, հազիւ մի քանի շաբաթ, ինչ այդ օրօրոցները իրար հակառակ կողմերից գալով այնտեղ միացին օդում կախված. Նրանցից իւրաքանչիւրի մէջ Թաւիշեայ թիկնաթոռների վրայ բազմած, համազգեստ իրանց հագին, (պատրաստված մասնաւորապէս այդ արշաւանքի համար,) կան երկերկու տիրան Վեհափառներ. Նրանք ամէնքը մէկ՝ կոչվում են „մարդկութեան պատիժ:“

Նորագիւտ համաձայնութեան այդ վեց մարդասպանները, որպէս սպօրտներ, իրանց արշաւանքին վայր ընտրեցին Յունա-Թրքական սահմանագլուխը, ուտեղ փոքրիկ Յունաստանը բացարձակ հերոսական կռիւ էր մղում, ընդդէմ Բեհեզզեբուղին և նրան գործակից ու խորհրդատու վեց հուժկու, բայց լիրբ պետութիւններին... Օդապարիկները հազիւ էին կանգ առել օդում, երբ անհանգիստ հետաքրքրութեամբ մեր վեց հրէշները դուրս հանելով իրանց գլուխները օդապարիկներից սկսան դիտել ներքև, երկրագնդի այդ մասի վրայ, ուտեղից վեր էին բարձրանում ծուխ, մրրիկ, բոց և հուր, մի ահռելի պատերազմական տեսարան: Թնդանօթների և հրացանների միօրինակ հարմօնին, որպէս միւզիքի քաղցր մեղեդի, նրանց իսկոյն արբեցրեց, որին և յաջորդեց անուշ քունը: Նրանցից մէկը սակայն ինչոր ահարկու երազից վեր թռչելով իր տեղից սկսաւ դիտել ներքև. նա խելքը կորցրած գազանի երևոյթն ստացաւ, տեսնելով Յոյների հերոսական ճիգերը և Բեհեզզեբուղի պարտութիւնները. իսկոյն իր տեղից հրամաններ արձակեց, բերել տուեց իր երկրից ամենաառաջին գեներալներից մի քանիսին, վերջին ձևի յիսուն թնդանօթներ և իւրաքանչիւրի համար երկերկու թնդանօթաձիգներ. այս կարգադրութիւնից յետոյ նա էլի ընկաւ խորը քունի մէջ. . Այս մէկն է նորին կայսր. Վեհափառութիւն Վիլհելմ, մարդկութեան պատիժը...

ԾԻԾԱՂ.

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄՏՔԵՐ

Գողին տալ դեր գիշերային պահապանի, կամ ջեզուիտին՝ հրապարակագրի — դա բոլորովին մի և նոյն բանն է:

Լ. ԲԷՕՌՆԷ.

* * *

Ժանգոտած վահանը պաղատում էր արևից. „Արև, փայլեցրու ինձ:“ Արևը պատասխանում է վահանին. „Վահան, մաքրվիր ժանգից:“

ՆՈՅՆ.

* * *

Դիպլօմատները տեսնում են ականջներով. Նրանց տարրն օդն է և ոչ լոյսը: Հէնց այդ պատճառը, որ նրանք սիրում են լռութիւն ու մթութիւն:

ՆՈՅՆ.

ՓՈ՛ՒՓ...

„Գարշահոտութիւն .. մէն մի տեղ, դաշտերի վրայ թէ բնակարաններում, ամբողջ օդը վատ հոտերից ապականվել և սպառնում է խեղդել մարդկանց“, ասում էր անցեալ օր երկաթուղու մէջ մի անգլիացի իր հարևանին. Հարևանը, որը տարիքը առած աւելի բանուորի երևոյթն ունէր քան ունևոր հաստափորի, այսպէս պատասխանեց. —

„Հիմակու ժամանակը, որ կապիտալիստները ամեն բան մենաշնորհ արած են կառավարութիւններից, վեց մեծ պետութիւններն էլ իրանց կողմից օդը մենաշնորհ արած են. Նրանք ուզեցին ապականել Արևելքի օդը, ամբողջ Թիւրքիայի օդը, որպէսզի նրա բնակիչները խեղդվեն այդ ապականութիւնից, և դատարկ, բայց արգաւանդ երկիրը մնայ իրանց բաժին, ահա այս գարշահոտութիւնը, որ մեզ ամենքիս տանջում է, գալիս է ուղղակի Արևելքից:

Ծ.

ԱՐՓԻԱՐԱ — ԱԼՖԱՐԻՕ — ՏԱՄԱՏԱ — ՖՐԱՆՔՕ
ԴԱՒԱՆԱՆՔԸ

Համբերե՞լ պէտք է, կը համբերենք.
Մտանե՞լ պէտք է, կը մտանենք.
Խաբե՞լ պէտք է, կը խաբենք.
Դրա՞մ պէտք է, կը շորթենք. մի խօսքով ամեն բան կանենք „Մահ“ կամ „Ազատութեան“ համար. բայց ջնջենք „Մահը“, պահենք միայն „Ազատութիւնը“: „Մահը թող դուրս նետուի մեր ազգային ծրագրէն:“

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

Հարց Թագակիրներին ու Մինիստրներին.—

— Ե՞րբ էք ի վերջոյ մտածում վերջ տալ սուլթանի ու Թիւրքիայի գոյութեան:

— Երբ նա կը լրացնէ իր „պատմական“ դերը, խողխողելով ու բնաջինջ անելով փոքր ազգերին — Կրէտէ, Հայաստան, Մակեդոնիա, Յունաստան և աւելին իսկ՝ Բալկանեան թերակղզի վրայ...

Քաղաքակնութիւն 19-րդ դարու վերջին օրերի:

* * *

1700 հոգուց բաղկացած մի խումբ կամաւորներ, առաջնորդութեամբ մի Յոյն երիտասարդ կնոջ, որը կրում էր մի մեծ Յունական դրօշակ, ուղևորուել են Աթէնքից դէպի Եպիրօս: Այս գործը մեծ ոգևորութիւն է առաջ բերել Յունաստանում. Սուլթանը նախանձից դրդված մտադիր էր ուղարկել մի բանակ՝ առաջնորդութեամբ իր մի հարէմուհու, Բայրախը Շէրիֆը բռնած ձեռքում, բայց վախենալով, որ հարէմուհին դուրս գալով Եըլտըզ-Քէօշկից թէ սուլթանից և թէ պատերազմից կը փախչի, ետ է կեցել այդ մտադրութիւնից:

* * *

Կօսսիօ հարուստ Յոյնը Եգիպտոսում հանգանակելով 200,000 ոսկի, տարել է իր հետ Աթէնք և յանձնել Յոյն կառավարութեան: Հայ հարուստներն էլ բարեգործական նպատակով ճաշկերոյթներ են տալիս փախստականներին և կենացներ կոնծում...

* * *

Սալօնիքի ծոցում Յունական զրահաւորը գրաւել է մի փոքրիկ նաւ, որի մէջ ի միջի այլոց գտնվել է Անգլիոյ Պարլամէնտի անդամներից մին, յայտնի սուլթանապաշտ Աշմէտ Բարտլէտ, որը դեռ վերջերս Էտհէմ փաշայի բանակումն էր: Աշմէտ Բարտլէտ ուղարկվել է Աթէնք, հարցաքննութեան ենթարկվելու համար: Հարցաքննութիւնից երևան է գալիս, որ նրա պապերը թիւրք են եղել և ինք նոյնպէս թիւրք օղլի թիւրք:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԾՐԱԳԻՐ
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՅԱՒԵԼՈՒԱԾ՝ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲ.
ԳԻՆԸ 1 ՖՐԱՆԿ.

„ԱՊՏԱԿ“
ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
(ՄԻԱՄՍԵԱՅ)

Առաջիկայ Մայիս ամսին „Ապտակը“ մտնում է իր գոյութեան չորրորդ տարեշրջանը: Բաժանորդ գըրվել ցանկացողներին խնդրում ենք առանց ուշացնելու դիմել „Ապտակի“ խմբագրութեան: „Ապտակի“ տարեկան բաժանորդագինն է 5 Ֆրանկ:

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.